

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՁԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
հաստատելով իրենց կողմնակցությունը փոխադարձ տնտեսական համագործակցության ազատ զարգացմանը,
ներդնելով պրակտիկայում շուկայական տնտեսության սկզբունքները,
գործելով 1993 թվականի սեպտեմբերի 24-ին Մոսկվա քաղաքում ստորագրված Տնտեսական միության ստեղծման մասին Պայմանագրի դրույթների իրականացման հաջորդական ուղղությամբ,
ձեռավորելով պայմաններ ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժման համար,
ապահովելով փոխադարձ առևտրի հավասարակշռությունը եւ մասնակցող պետությունների տնտեսական վիճակի ներքին կայունացումը,
աջակցելով մասնակից պետությունների տնտեսական ներուժի աճին՝ փոխադարձ կոոպերացիոն կապերի եւ համագործակցության զարգացման հիման վրա,
ղեկավարվելով իրենց պետությունների բնակչության կենսամակարդակի մշտական բարձրացման ձգտումով,
ելնելով այն բանից, որ Տնտեսական միությունը ստեղծվում է փուլերով,
դառնալով ազատ առևտրի գոտու ստեղծման մասին Համաձայնագրի մասնակից, այսուհետ՝ Համաձայնագիր, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակների ձեռքբերման նպատակով Պայմանավորվող կողմերը փոխգործակցություն կապահովեն Տնտեսական միության ստեղծման առաջին փուլի կոնկրետ խնդիրների լուծման գործում, որոնք ուղղված են.
համարժեք գործողություն ունեցող մաքսային տուրքերի, հարկերի եւ վճարների ու փոխադարձ առևտրում քանակական սահմանափակումների հետզհետե վերացմանը, ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժման համար այլ խոչընդոտների վերացմանը,
առևտրային եւ այլ գործողություններով փոխադարձ հաշվարկների ու վճարների արդյունավետ համակարգի ստեղծմանը եւ զարգացմանը,
սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող երկրների հանդեպ առևտրային քաղաքականության համադրմանը,
տնտեսական քաղաքականության համադրմանը այն չափով, որքանով դա անհրաժեշտ է Համաձայնագրի նպատակների ձեռքբերման համար (արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, ֆինանսների, ներդրումների, սոցիալական ոլորտի, բարեխիղճ մրցակցության զարգացման եւ այլ բնագավառներում),
միջճյուղային եւ ներճյուղային կոոպերացիայի եւ գիտատեխնիկական համագործակցության աջակցությանը,
Պայմանավորվող կողմերի օրենսդրությունների ներդաշնակեցմանը եւ/կամ միասնականացմանը այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ազատ առևտրի գոտու պատշաճ եւ արդյունավետ գործունեության համար,
2. Համաձայնագրի տարածքը ներառում է Պայմանավորվող կողմերի մաքսային տարածքները:
3. Եթե հասկացությունների նշանակությունը Համաձայնագրում հատուկ կերպով կամ Պայմանավորվող կողմերի այլ պայմանավորվածությամբ սահմանված չի, ապա դրանց մեկնաբանման դեպքում Պայմանավորվող կողմերը կղեկավարվեն Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թվականի՝ Վիեննայի Կոնվենցիայի դրույթներով,
Համաձայնագրի կամ դրա առանձին հասկացությունների մեկնաբանման հետ կապված

տարածայնությունները կլուծվեն սույն Համաձայնագրի հետ կապված վեճերի կարգավորման համար ընդունված ընթացակարգին համապատասխան:

4. Պայմանավորվող կողմերը ձեռնպահ կմնան սույն Համաձայնագրի դրույթներին հակասող եւ նպատակների ձեռքբերմանը խոչընդոտող գործողություններից: Այս դրույթը վերաբերում է, մասնավորապես, տարածաշրջանային այլ տնտեսական խմբավորումներին Պայմանավորվող կողմերի մասնակցության պայմաններին, ինչպես նաեւ Համաձայնագրի շրջանակներում հարաբերությունների կարգավորման հետ կապված այլ հարցերին:

ՀՈՂՎԱԾ 2. ՉՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱԲ ՌԵԺԻՄ

Պայմանավորվող կողմերը իրենց իրավունք են վերապահում սույն Համաձայնագրին չմասնակցող պետությունների հետ արտաքին տնտեսական հարաբերությունների ռեժիմը ինքնուրույն եւ անկախ սահմանելու:

ՀՈՂՎԱԾ 3. ՀԱՄԱՐԺԵ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՆԱԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՔԱՑԻՆ ՏՈՒՐՔԵՐ, ՀԱՐԿԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ

1. Պայմանավորվող կողմերը չեն կիրառում Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի մաքսային տարածքից ծագող եւ մյուս Պայմանավորվող կողմերի մաքսային տարածքների համար նախատեսված ապրանքների ներմուծման եւ/կամ արտահանման համար համարժեք գործողություն եւ քանակական սահմանափակումներ ունեցող մաքսային տուրքեր, հարկեր եւ գանձումներ: Տվյալ առետրային ռեժիմից սահմանափակումները ձեւակերպվում են փաստաթղթերով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից վեց ամսվա ընթացքում մշակում եւ համաձայնեցնում են ազատ առետրի ռեժիմից բացառումների ընդհանուր Ցանկը, ինչպես նաեւ մինչեւ ազատ առետրի գոտու ստեղծումը անցումային ժամանակաշրջանում նման բացառումների կիրառման եւ փուլային վերացման մեթոդները:

3. Նախքան բացառումների ընդհանուր Ցանկի համաձայնեցումը՝ Պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում կկիրառվեն ազատ առետրի մասին գործող երկկողմ համաձայնագրեր եւ այդ ռեժիմից բացառումների մասին արձանագրություններ, եթե այլ բան նախատեսված չի երկկողմ համաձայնագրերով:

4. Ապրանքի ծագման երկիրը որոշվում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող ապրանքների ծագման երկրի որոշման Կարգին համապատասխան (հավելված 1):

ՀՈՂՎԱԾ 4. ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ (ՍԱՀՄԱՆԱՓՈՎՄՆԵՐ)

1. Պայմանավորվող կողմերը փոխադարձ առետրում տեխնիկական խոչընդոտների եւ համանման բնույթի այլ սահմանափակումների վերացման նպատակով կձգտեն տեխնիկական եւ այլ հատուկ պահանջների ներդաշնակեցմանը եւ այդ բնագավառում իրենց քաղաքականության համաձայնեցմանը:

2. Պայմանավորվող կողմերը իրենց իրավասու մարմիններին կհանձնարարեն պատրաստելու համապատասխան առաջարկություններ բազմակողմ կամ երկկողմ հիմքով, սույն հոդվածի առաջին կետի դրույթների իրացման նպատակով:

ՀՈՂՎԱԾ 5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ ԵՎ ԶԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փոխադարձ առետրում ապրանքների ներմուծման կամ արտահանման հետ կապված Պայմանավորվող կողմերի սահմանած բոլոր գանձումները եւ վճարները (բացառությամբ մաքսային տուրքերի, հարկերի եւ դրանց հավասարեցված գանձումների) չպետք է

գերազանցեն ուղղակի փաստացի ծախսերը խելամիտ սահմաններում:

2. Պայմանավորվող կողմերը կտեղեկացնեն միմյանց գանձումների եւ վճարների տեսակների մասին եւ կձգտեն դրանց թվի եւ չափերի համաձայնեցված կրճատմանը:

3. Պայմանավորվող կողմերը կձգտեն վարչական ձեւականությունների պարզեցմանը եւ միասնականացմանը:

4. Սույն հոդվածի դրույթները տարածվում են, մասնավորապես, գանձումների եւ ձեւականությունների վրա, որոնք վերաբերում են.

քանակական սահմանափակումներին,

լիցենզավորմանը,

արժույթային հսկողությանը,

վիճակագրական հաշվառմանը,

փաստաթղթերին, փաստաթղթավորմանը եւ փաստաթղթերի հաստատմանը,

վերլուծությանը եւ ուսումնասիրմանը,

կարանտինին, սանիտարական ծառայությանը, ֆումիգացիային եւ այլն:

ՀՈՂՎԱԾ 6. ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ/ԿԱՄ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ

1. Պայմանավորվող կողմերը միջոցներ կձեռնարկեն մաքսային ձեւականությունների առավելագույն պարզեցման եւ միասնականացման համար, մասնավորապես, մաքսային եւ ապրանքներն ուղեկցող փաստաթղթերի միասնական ձեւեր մտցնելու ճանապարհով՝ կողմնորոշվելով դեպի գործող միջազգային համաձայնագրերը եւ պայմանավորվածությունները:

2. Պայմանավորվող կողմերը կհանձնարարեն իրենց իրավասու մարմիններին առաջարկություններ պատրաստել, որոնք վերաբերում են մաքսային ընթացակարգեր ներդաշնակեցմանը եւ մաքսային փաստաթղթերի ու մաքսային ապահովվածությունների փոխադարձ ճանաչմանը:

ՀՈՂՎԱԾ 7. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ

1. Սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման միջոցների իրականացման, վիճակագրական հաշվառում անցկացնելու եւ վիճակագրական տեղեկության փոխանակման դեպքում, ինչպես նաեւ մաքսային հսկողության եւ ձեւակերպման համար Պայմանավորվող կողմերը կօգտագործեն արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկերը՝ հիմնված ապրանքների նկարագրման եւ կողավորման ներդաշնակ համակարգի վրա: Ընդ որում, անհրաժեշտության դեպքում, Պայմանավորվող կողմերը սեփական կարիքների համար իրականացնում են ազգային ապրանքների անվանացանկերի հետագա զարգացումը:

2. Ապրանքների նկարագրման եւ կողավորման ներդաշնակ համակարգի նմուշային օրինակի պատրաստումը իրականացնում է Ռուսաստանի Դաշնությունը առկա ներկայացուցչությունների միջոցով, համապատասխան միջազգային կազմակերպություններում, քանի դեռ մյուս Պայմանավորվող կողմերը չեն հայտարարի նմուշային օրինակի ինքնուրույն պատրաստման մասին:

ՀՈՂՎԱԾ 8. ՆԵՐՔԻՆ ՀԱՐԿԵՐ ԵՎ ՖԻՍԿԱԼ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ

1. Պայմանավորվող կողմերը մյուս Պայմանավորվող կողմերի մաքսային տարածքներից ծագող ապրանքներից ուղղակի կամ անուղղակի ձեւով չեն գանձի հարկեր եւ ֆիսկալ բնույթի այլ գանձումներ՝ ազգային ապրանքների համար դրանց մակարդակը գերազանցող չափով:

2. Պայմանավորվող կողմերը կտրամադրեն լրիվ տեղեկատվություն բոլոր գործող հարկերի եւ ֆիսկալ բնույթի այլ գանձումների մասին:

ՀՈՂՎԱԾ 9. ԼՐԱՎՃԱՐՆԵՐ /ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ/

Պայմանավորվող կողմերը համաձայնել են չտրամադրել արտահանման եւ այլ լրավճարներ /տուբսիդիաներ/ իրենց տարածքներում գտնվող ձեռնարկություններին, եթե նման լրավճարների /տուբսիդիաների/ տրամադրման արդյունքում խախտվում են բարեխիղճ մրցակցության պայմանները:

ՀՈՂՎԱԾ 10. ՏԱՐԱՆՑՈՒՄ

1. Պայմանավորվող կողմերը համաձայն են, որ տարանցման ազատության սկզբունքի պահպանումը հանդիսանում է սույն Համաձայնագրի նպատակների ձեռքբերման կարեւոր պայման եւ աշխատանքի միջազգային բաժանման ու կոոպերացման համակարգին դրանց միացման գործընթացի էական տարր:

2. Տարանցիկ փոխադրումները չպետք է ենթարկվեն անհիմն ձգձգումների կամ սահմանափակումների:

3. Տարանցման պայմանները, ներառյալ տրանսպորտի ցանկացած տեսակով փոխադրման համար սակագները եւ ծառայությունների մատուցումը, չպետք է ավելի վատթար լինեն, քան նրանք, որոնք Պայմանավորվող կողմերը ապահովում են բեռների սեփական ուղարկողների եւ ստացողների, իրենց պատկանող ապրանքների, ինչպես նաեւ այդ Պայմանավորվող կողմի փոխադրողների ու տրանսպորտային միջոցների համար կամ տրամադրվում են բեռների ուղարկողներին եւ ստացողներին, նրանց պատկանող ապրանքներին, ցանկացած այլ օտարերկրյա պետության փոխադրողներին ու տրանսպորտային միջոցներին, եթե այլ բան նախատեսված չի երկկողմ համաձայնագրերով:

ՀՈՂՎԱԾ 11. ՎԵՐԱԳՐՏԱՅԻՆՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ չի թույլատրի այն ապրանքների անթույլատրելի վերաարտահանումը, որոնց արտահանման նկատմամբ մյուս Պայմանավորվող կողմերը, որոնց տարածքից ծագում են այդ ապրանքները, կիրառում են սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

2. Պայմանավորվող կողմերը չեն խոչընդոտի տնտեսվարող սուբյեկտներին կոնտրակտներում դրույթներ ներառել, որոնք վերաբերում են ապրանքների վերաարտահանմանը:

3. Ապրանքների վերաարտահանման հետ կապված հարցերը կարգավորվում են "Ապրանքների վերաարտահանման եւ վերաարտահանման համար թույլտվություն տալու կարգի մասին" Համաձայնագրով (Հավելված 2), որը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈՂՎԱԾ 12. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱ ԵՎ ԳԻՏԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պայմանավորվող կողմերը կնպաստեն արտադրական կոոպերացիայի եւ գիտատեխնիկական համագործակցության զարգացմանը միջպետական (միջգերատեսչական, տարածաշրջանային) եւ տնտեսվարող սուբյեկտների մակարդակով, այդ թվում՝ պետական օժանդակության տարբեր ձևերի տրամադրման միջոցով:

ՀՈՂՎԱԾ 13. ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Ընդհանուր բացառումներ:

Սույն Համաձայնագիրը չի խոչընդոտում Պայմանավորվող կողմերից ցանկացածի իրավունքին՝ ընդունելու միջազգային պրակտիկայում հանրաճանաչ արտաքին տնտեսական կապերի բնագավառում պետական կարգավորման միջոցներ, որոնք նա անհրաժեշտ է համարում իր կենսական շահերի պաշտպանության համար, կամ որոնք անպայման անհրաժեշտ են միջազգային պայմանագրերի կատարման համար, որոնց մասնակից է նա կամ մտադիր է դառնալ, եթե այդ միջոցները վերաբերում են.

հասարակական բարոյականության եւ հասարակական կարգի պաշտպանությանը,

մարդկանց կյանքի եւ առողջության պաշտպանությանը,
կենդանիների եւ բույսերի պահպանությանը,
շրջակա միջավայրի պաշտպանությանը,
ազգային սեփականություն կազմող գեղարվեստական, հնագիտական եւ պատմական
արժեքների պահպանությանը,
արդյունաբերական եւ մտավոր սեփականության պաշտպանությանը,
ոսկու, արծաթի կամ այլ թանկարժեք մետաղների ու քարերի առետրին,
չվերականգնվող բնական ռեսուրսների պահպանությանը,
արտադրանքի արտահանման սահմանափակմանը, երբ այդ արտադրանքի ներքին արժեքը
օժանդակության պետական ծրագրերի իրականացման արդյունքում ցածր է համաշխարհային
արժեքից,

վճարային հաշվեկշռի խախտմանը:

2. Բացառություններ անվտանգության նկատառումներով:

Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Պայմանավորվող կողմերից
յուրաքանչյուրի իրավունքին՝ կիրառելու պետական կարգավորման ցանկացած միջոցներ,
որոնք նա անհրաժեշտ է համարում, եթե այդ միջոցները վերաբերում են.

ազգային անվտանգության ապահովմանը, ներառյալ պետական գաղտնիքին վերաբերող
գաղտնի տեղեկատվության արտահոսքի կանխարգելումը,

գեներ, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի առետրին, ռազմական բնույթի
ծառայությունների ցուցաբերմանը, տեխնոլոգիաների փոխանցմանը եւ սպառազինության
ու ռազմական տեխնիկայի արտադրության համար եւ այլ ռազմական նպատակներով
ծառայությունների ցուցաբերմանը,

ճեղքվող նյութերի եւ ռադիոակտիվ նյութերի աղբյուրների մատակարարմանը,
ռադիոակտիվ թափոնների ուտիլացմանը,

միջազգային հարաբերություններում ռազմական դրության ժամանակ կամ այլ
արտակարգ հանգամանքներում կիրառվող միջոցներին,

միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանության համար ՄԱԿ-ի
Կանոնադրության հիման վրա նրա կողմից պարտավորությունների իրականացման
գործողություններին:

ՀՈՂՎԱԾ 14. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՄՏՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պայմանավորվող կողմը նախօրոք ծանուցում է մյուս Պայմանավորվող կողմերին
պետական կարգավորման միջոցների ներառման եւ գործողության պատճառների, բնույթի
եւ ենթադրվող ժամկետների մասին:

2. Պայմանավորվող կողմերը անց են կացնում նախնական խորհրդակցություններ եւ
մշակում երաշխավորություններ: Համաձայնեցված որոշում ընդունելու
անհնարինության դեպքում, սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված Պայմանավորվող
կողմը, վեցամսյա ժամկետում իրավունք ունի, ըստ իր հայեցողության, կիրառել
պետական կարգավորման միջոցներ:

3. Հետաձգման ոչ ենթակա հատուկ դեպքերում, Պայմանավորվող կողմը իրավունք
ունի արտաքին տնտեսական գործունեության բնագավառում կիրառել պետական
կարգավորման միջոցներ՝ միաժամանակ տեղեկացնելով մյուս Պայմանավորվող կողմերին
եւ նրանց հետ հետագա, անհապաղ խորհրդակցություն անցկացնելով:

ՀՈՂՎԱԾ 15. ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն եւ կիրականացնեն համաձայնեցված
գործողություններ արտահանման նկատմամբ հսկողության հարցերում:

ՀՈՂՎԱԾ 16. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Ազատ առետրի գոտու ռեժիմը տարածվում է Պայմանավորվող կողմերի մաքսային

տարածքներից ծագող եւ Պայմանավորվող կողմերի մաքսային տարածքների համար նախատեսված ապրանքների վրա:

ՀՈՂՎԱԾ 17. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պայմանավորվող կողմերը, փոխադարձության հիման վրա, կձգտեն սահմանափակումների հետզհետե վերացմանը՝ Համաձայնագրի տարածքի սահմաններում ծառայությունների ազատ ցուցաբերման համար պայմանների ստեղծման նպատակներով:

2. Պայմանավորվող կողմերը կսահմանեն ծառայությունների տեսակները, որոնց վրա տարածվում են սույն հոդվածի գործողությունը եւ կընդգծեն ապրանքաշրջանառության անմիջական սպասարկման բնագավառում ծառայությունների առաջնային ձեւերը, որոնց վերաբերյալ ներմուծման եւ արտահանման ազատականացման հարցերը ենթակա են առաջնահերթության կարգով լուծման:

3. Պայմանավորվող կողմերը իրենց իրավունք են վերապահում համաձայնեցնելու ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ հիմքով ծառայությունների մատուցման հետ կապված հարցերը:

ՀՈՂՎԱԾ 18. ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Պայմանավորվող կողմերը, համաձայնեցված կարգով, միմյանց տրամադրում են արտաքին տնտեսական կապերի ներքին իրավական կարգավորման մասին տեղեկություններ:

ՀՈՂՎԱԾ 19. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ/կամ կիրառման հետ կապված Պայմանավորվող կողմերի միջեւ ցանկացած վեճ կամ տարաձայնություն, ինչպես նաեւ սույն Համաձայնագրով կամ դրա հետ կապված Պայմանավորվող կողմերի իրավունքները եւ պարտականությունները շոշափող այլ վեճեր կլուծվեն հետեւյալ կարգով.

շահագրգիռ Պայմանավորվող կողմերի միջեւ, կամ փոխադարձ համաձայնությամբ, այլ Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ անմիջական խորհրդակցությունների անցկացման միջոցով,

հատուկ համաձայնեցնող ընթացակարգի շրջանակներում (վեճի նյութերի ուսումնասիրման եւ երաշխավորությունների մշակման համար աշխատանքային խմբերի ստեղծման միջոցով),

ԱՊՀ Տնտեսական դատարանում,

միջազգային իրավունքով նախատեսված այլ ընթացակարգերի շրջանակներում:

2. Հաջորդ ընթացակարգին անցումը հնարավոր է Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնց միջեւ ծագել են վիճելի հարցեր կամ տարաձայնություններ, կամ այդ Պայմանավորվող կողմերից մեկի պահանջով, եթե համաձայնություն ձեռք չի բերվում ընթացակարգը սկսելու օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՈՂՎԱԾ 20. ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄՅՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող խոչընդոտել Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրին կատարելու որեւէ այլ միջազգային համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, որի մասնակից է հանդիսանում այդ Պայմանավորվող կողմը կամ կարող է դառնալ, պայմանով, որ այդ պարտավորությունները չհակասեն սույն Համաձայնագրի դրույթներին ու նպատակներին:

2. Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում ներքին օրենսդրությամբ կամ միջազգային համաձայնագրերի հիման վրա կանոնակարգվող տարածաշրջանային համագործակցության, սահմանամերձ եւ ափամերձ առեւտրի, արտոնությունների, ազատ

տնտեսական եւ մաքսային գոտիների շրջանակներում տրամադրվող իրավունքներն ու առավելությունները:

3. Պայմանավորվող կողմը, որը մտադիր է արտոնյալ, առեւտրային եւ ինտեգրացիոն համաձայնագրեր կնքել սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետությունների հետ, նախօրոք ծանուցում է դրա մասին մյուս Պայմանավորվող կողմերին եւ տեղեկացնում է նրանց վերոհիշյալ համաձայնագրերում իր մասնակցության ենթադրվող պայմանների մասին:

Սույն կետի նպատակների համար Պայմանավորվող կողմեր են հանդիսանում սույն Համաձայնագիրը ստորագրած Պայմանավորվող կողմերը եւ սույն Համաձայնագրին միացած պետությունները:

ՀՈՂՎԱԾ 21. ԱՆՑՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Ազատ առեւտրի գոտին դիտարկվում է որպես Մաքսային միության անցման համար անցումային փուլ:

Մաքսային միությունը կարող է ստեղծվել այն պետությունների կողմից, որոնք ցանկություն կարտահայտեն շարունակելու համագործակցությունը նրա շրջանակներում եւ որոնք կկատարեն սույն Համաձայնագրի պայմանները:

ՀՈՂՎԱԾ 22. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. Սույն Համաձայնագրում, Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

2. Սույն Համաձայնագրի վերաբերյալ վերապահումներ չեն թույլատրվում:

ՀՈՂՎԱԾ 23. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ է մտնում այն ստորագրած Պայմանավորվող կողմերի կողմից բոլոր անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

2. Սույն Համաձայնագրի ավանդապահն է Բելառուսի Հանրապետությունը:

3. Սույն Համաձայնագիրը ստորագրելու օրվանից մեկ տարի անց, Պայմանավորվող կողմերը, որոնց համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտել, կարող են որոշում ընդունել Համաձայնագրում այն Պայմանավորվող կողմերի մասնակցության վերաբերյալ, որոնց համար Համաձայնագիրը կիրառվում է ժամանակավորապես:

ՀՈՂՎԱԾ 24. ՄԻԱՑՈՒՄ

1. Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության կողմից միանալու համար, որը ճանաչում է միանալու պահին գործող Համաձայնագրի դրույթները եւ պատրաստակամություն է հայտնում կատարել դրանք լրիվ ծավալով:

2. Միացումը իրականացվում է միացող պետության հետ կնքվող առանձին համաձայնագրում սահմանված պայմաններով եւ կարգով: Այդ համաձայնագիրը նախօրոք համաձայնեցվում է եւ ենթակա բոլոր Պայմանավորվող կողմերի հավանությանը՝ նրանց ներպետական ընթացակարգերին համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 25. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ

1. Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է դադարեցնել Համաձայնագրում իր մասնակցությունը՝ վեց ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմերին Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին պաշտոնական գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի կողմից սույն Համաձայնագրի դրույթների խախտման դեպքում, որը լուրջ վնաս է հասցնում նրա նպատակների ձեռքբերմանը, մյուս Պայմանավորվող կողմերը իրավունք ունեն որոշում ընդունել այդ Պայմանավորվող կողմի նկատմամբ դադարեցնելու Համաձայնագրի կամ դրա առանձին մասերի գործողությունը, կամ որոշում ընդունել Համաձայնագրի մասնակիցներից նրան բացառելու վերաբերյալ:

3. Հնարավոր վեճերի ու հավակնությունների լուծման նպատակների համար, այդ թվում նյութական բնույթի, սույն Համաձայնագրի դրույթները շարունակում են գործել մասնակցությունը դադարեցրած Պայմանավորվող կողմի նկատմամբ, մինչև բոլոր պահանջների լրիվ կարգավորումը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1994 թվականի ապրիլի 15-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած Պայմանավորվող կողմերին կուղարկի դրա հաստատված պատճենները:

* "Ապրանքների ծագման երկրի որոշման Կանոնների մասին" Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների հորհրդի որոշումը ընդունվել է Մոսկվա քաղաքում 1993 թվականի սեպտեմբերի 24-ին:

** Ապրանքների ծագման երկրի որոշման Կանոնների 9-րդ և 10-րդ կետերի փոփոխության մասին Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների հորհրդի որոշումն ընդունվել է 1994 թվականի ապրիլի 15-ին:

*** "Ապրանքների վերաարտահանման և վերաարտահանման համար թույլտվություն տալու կարգի մասին" Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների հորհրդի Համաձայնագիրը ընդունվել է 1994 թվականի ապրիլի 15-ին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի հունվարի 22-ից: